

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝ 2015 թ. հունիսի 19-ին տեղի ունեցած թիվ 2 նիստի

ք. Երևան

Նիստին ներկա էին «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 32 անդամներից 30-ը (կից ներկայացվում է Խորհրդի անդամների գրանցման ստորագրացուցակը):

Նիստը նախագահում էր Խորհրդի նախագահ, ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանը, իսկ քարտուղարում՝ Խորհրդի քարտուղար, Հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ Մ. Մալխասյանը:

Ս. Սարգսյանը, բացելով Խորհրդի երկրորդ նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի ընտրություն.

- ա) Հավակնորդի՝ ԵՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգով նախատեսված պահանջներին համապատասխանության որոշում:
- բ) Հավակնորդի ծրագրի ներկայացում:
- գ) Հարցերի ներկայացում հավակնորդին, ելույթներ:
- դ) Հաշվիչ հանձնաժողովի ձևավորում:
- ե) Ռեկտոր ընտրելու նպատակով գաղտնի քվեարկություն:
- զ) Ռեկտորի ընտրության արդյունքների մասին որոշման կայացում:

2. Ընթացիկ հարցեր.

- ա) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետում Դեղերի տեխնոլոգիայի և Էկոնոմիկայի ամբիոնի ստեղծում:
- բ) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում Չինարենի և չինական մշակույթի կենտրոնի ստեղծում:
- գ) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կազմում «Ուսանողական ծառայություններ» ՍՊԸ-ի ստեղծում:
- դ) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2015 թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձի ընտրություն:

ե) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի սեփականությունը հանդիսացող լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի) գույքի դուրսգրման, լուծարման և օտարման կարգի հաստատում:

զ) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2014 թ. գործունեության մասին azdarar.am պաշտոնական կայքում հրապարակվող հաշվետվության կրճատ տարբերակի հաստատում:

է) Այլ հարցեր:

Խորհրդի անդամների կողմից օրակարգային այլ հարց չառաջարկվեց, և օրակարգը դրվեց քվեարկության. կողմ՝ 30, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի ընտրություն:

Խորհրդի քարտուղար Մ. Մալխասյանը գեկուցեց, որ ԵՊՅ ռեկտորի թափուր պաշտոնի համար բաց մրցույթին մասնակցելու համար 11.05.2015 թ. հայտ է ներկայացրել ԶԶ ԳԱԱ թղթակից անդամ, պ.գ.դ., պրոֆ. Արամ Սիմոնյանը: Խորհրդի քարտուղարի հաղորդմամբ՝ հավակնորդի ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են ԵՊՅ ռեկտորի ընտրության կանոնակարգի պահանջներին: Զանի որ հավակնորդի փաստաթղթերի պատճենները նախապես առաքվել էին Խորհրդի անդամներին, և նրանք ծանոթացել էին դրանց, ուստի փաստաթղթերի առնչությամբ հարցեր չինչեցին: Խորհուրդը որոշեց (30 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ), որ հավակնորդը համապատասխանում է ԵՊՅ ռեկտորի ընտրության կանոնակարգով նախատեսված պահանջներին:

Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը խոսքը փոխանցեց ԵՊՅ ռեկտորի թափուր պաշտոնի հավակնորդ Ա. Սիմոնյանին: Վերջինս ներկայացրեց իր նախընտրական ծրագրի (Ա. Սիմոնյան, Երևանի պետական համալսարանի զարգացման ծրագիր, Երևան, 2015) առանցքային դրույթները՝ շեշտը դնելով ուսանողակենտրոն ուսուցման, հետազոտական համալսարանի կայացման, օտարերկրացի ուսանողների թվի աճի, ԵՊՅ զարգացման ռազմավարական ծրագրի մշակման և այլ խնդիրների վրա:

Հավակնորդին հարցեր չներկայացվեցին:

Խորհրդի անդամներից ելույթ ունեցան Զ. Մուսայեյանը, Ն. Հարությունյանը, Ռ. Զարամյանը, Մ. Ապրեսյանը, Ա. Ենգոյանը, ովքեր դրվատանքի խոսքեր արտահայտեցին ԵՊՅ ռեկտորի պաշտոնի հավակնորդ Ա. Սիմոնյանի հասցեին:

Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը ներկայացրեց քվեարկության ընթացակարգը և առաջարկեց քվեարկությունը կազմակերպելու համար ձևավորել հաշվիչ հանձնաժողով: Խորհրդի անդամների կողմից առաջարկվեցին հետևյալ թեկնածուությունները.

1. Ալեքսանդր Սարգսյան (30 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ)
2. Արտակ Մովսիսյան (30 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ)
3. Նազիկ Հարությունյան (30 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ)
4. Սամվել Շուքուրյան (30 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ)
5. Սմբատ Լպուտյան (30 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

Հաշվիչ հանձնաժողովը, իր կազմից հանձնաժողովի նախագահ ընտրելով Ն. Հարությունյանին, քարտուղար՝ Ա. Մովսիսյանին, և ստորագրելով բոլոր քվեաթերթիկների վրա, կազմակերպեց փակ (գաղտնի) քվեարկություն: Վերջինիս ավարտից հետո կազմվեց հաշվիչ հանձնաժողովի արձանագրություն, և հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ն. Հարությունյանը խորհրդի անդամներին հրապարակեց քվեարկության արդյունքները՝ կողմ՝ 30, դեմ՝ 0, անվավեր՝ 0:

Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանն առաջարկեց հաստատել փակ (գաղտնի) քվեարկության արդյունքները. կողմ՝ 30, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց.

Դեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 2-րդ ենթակետով, Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 2-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի ռեկտորի ընտրության կանոնակարգի 5.16, 5.17 և 5.26 կետերով, հիմք ընդունելով գաղտնի քվեարկության արդյունքները (30 կողմ, 0 դեմ, 0 անվավեր)՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառավարիչ-ռեկտոր ընտրել Արամ Հրաչիկի Սիմոնյանին:

2. Ընթացիկ հարցեր

ա) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետում Դեղերի տեխնոլոգիայի և Էկոնոմիկայի ամբիոնի ստեղծում: Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը ներկայացրեց, որ ԵՊՀ գիտական խորհուրդն առաջարկում է ԵՊՀ դեղագիտության և քիմիայի ֆակուլտետում ստեղծել Դեղերի տեխնոլոգիայի և Էկոնոմիկայի ամբիոն: Խորհրդի անդամ, ՀՀ ԳԱԱ նախագահ Ռ. Մարտիրոսյանը խնդրեց հիմնավորել ամբիոնի ստեղծման անհրաժեշտությունը, և ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանը նշեց, որ առաջարկը ԵՊՀ գիտական խորհրդում ընդունվել է Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի միջնորդության հիման վրա: Ա. Սիմոնյանը նաև տեղեկացրեց, որ հաշվի առնելով ամբիոնի հիմնադրման գործնական (արտադրական) անհրաժեշտությունը, առաջարկին կողմ են արտահայտվել ոչ միայն ԵՊՀ գիտական խորհրդի՝ Դեղագիտության և

քիմիայի ֆակուլտետից անդամները, այլև Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ներկայացուցիչները:

ԵՊՀ գիտական խորհրդի միջնորդությունը դրվեց քվեարկության. կողմ՝ 30, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 5-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 5-րդ ենթակետով, հիմք ընդունելով Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի 07.05.2015 թ. որոշումը՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետում ստեղծել Դեղերի տեխնոլոգիայի և Էկոնոմիկայի ամբիոն:

բ) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում Չինարենի և չինական մշակույթի կենտրոնի ստեղծում: Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը ներկայացրեց, որ ԵՊՀ գիտական խորհուրդն առաջարկում է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում ստեղծել Չինարենի և չինական մշակույթի կենտրոն: ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանը տեղեկացրեց, որ ֆինանսավորման հարցը նախապես կարգավորված է, ուստի կենտրոնի հիմնումը նյութական դժվարություններ չի ունենա: Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանն իր հերթին կարևորեց ցանկացած նախաձեռնություն հայ-չինական հարաբերությունների սերտացման ասպարեզում, ուստիև ողջունեց գաղափարը:

ԵՊՀ գիտական խորհրդի միջնորդությունը դրվեց քվեարկության. կողմ՝ 30, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 5-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 5-րդ ենթակետով, հիմք ընդունելով Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի 07.05.2015 թ. որոշումը՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում ստեղծել Չինարենի և չինական մշակույթի կենտրոն:

գ) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կազմում «Ուսանողական ծառայություններ» ՍՊԸ-ի ստեղծում: Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը հետաքրքրվեց ստեղծվելիք «Ուսանողական ծառայություններ» ՍՊԸ-ի գործառույթներով: Հարցի ամօրինակ էլույթ ունեցան Խորհրդի քարտուղար Մ. Մալխասյանը, անդամ Ռ. Քարամյանը, ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանը՝ նշելով, որ ՍՊԸ-ի ստեղծման հիմնական նպատակներից է համալսարանական տարբերանշաններով հուշանվերների վաճառքի կազմակերպման միջոցով ստեղծել նյութական միջոցներ՝ սոցիալապես անապահով ուսանողների ուսման վարձավճարներն այդ կերպ մասնակիորեն վճարելու համար: Խորհրդի անդամ Դ. Հարությունյանը, սակայն, մատնանշեց այն հանգամանքը, որ նախաձեռնությամբ հանդես եկած Ուսանողական խորհուրդը չի ներկայացրել ստեղծվելիք ՍՊԸ-ի կանոնադրությունը, որը պետք է կցվեր որոշման նախագծին:

Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը ողջունեց «Ուսանողական ծառայություններ» ՍՊԸ-ի ստեղծման մտահղացումը, սակայն կանոնադրության նախագծի բացակայության պատճառով առաջարկեց ՍՊԸ-ի ստեղծման մասին որոշումն ընդունել Խորհրդի հաջորդ նիստում: Առաջարկը դրվեց քվեարկության. կողմ՝ 30, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

դ) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2015 թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձի ընտրություն: ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանը ներկայացրեց, որ ԵՊՀ 2015 թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձի ընտրության նախնական մրցույթին մասնակցելու համար հայտ են ներկայացրել 3 ընկերություններ՝ «Սոս-աուդիտ» ՍՊԸ, «Էյ-Էն աուդիտ» ՓԲԸ, «ԹՄ աուդիտ» ՓԲԸ, որոնցից ամենացածր գինն առաջարկում է «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ-ն: Հիմք ընդունելով ընկերությունների կողմից ներկայացված պայմանները՝ առաջարկվեց աուդիտ իրականացնելու համար ընտրել առավել ցածր գին ներկայացնող ընկերությանը: Այլ առաջարկներ չեղան, և Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանն առաջարկը դրեց քվեարկության. կողմ՝ 30, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 13-րդ և 39-րդ հոդվածի 3-րդ կետերով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 16-րդ ենթակետով՝ հաստատել «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ-ին՝ որպես աուդիտ իրականացնող անձ, և սահմանել աուդիտ իրականացնող անձի հետևյալ գործառույթները.

1) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2015 թ. համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի իրականացում և անկախ աուդիտորական եզրակացության ներկայացում:

2) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի եկամուտների ու ծախսերի 2015 թ. տարեկան նախահաշվի և դրա փոփոխությունների կատարողական հաշվետվության աուդիտի իրականացում և անկախ աուդիտորական եզրակացության ներկայացում:

ե) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի սեփականությունը հանդիսացող լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի) գույքի դուրսգրման, լուծարման և օտարման կարգի հաստատում: ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանը նշեց, որ ԵՊՀ կարգավիճակի փոփոխությունից ելնելով՝ անհրաժեշտ է հաստատել ԵՊՀ սեփականությունը հանդիսացող լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի) գույքի դուրսգրման, լուծարման և օտարման կարգ: Հարցի վերաբերյալ խորհրդի անդամներից ելույթ ունեցան Ս. Շուբուրյանը և Գ. Հաջյանը: Ս. Շուբուրյանը առաջարկում էր տեխնիկայի դուրսգրման պարագայում սահմանել հստակ ժամկետներ, որպեսզի մի քանի տարին մեկ տեղի ունենա ժամանակակից սարքավորումներով վերազինում: Գ. Հաջյանն առաջարկում էր խմբագրել կարգի նախագծի 3-րդ և 7-րդ կետերը, ինչպես նաև ավելացնել նոր կետ, որի համաձայն մեծ արժեք ունեցող գույքի օտարման հարցը պետք է նախապես քննարկվի ֆակուլտետներում: Առաջին երկու առաջարկներն ընդունվեցին ի գիտություն, իսկ վերջին առաջարկը, հաշվի առնելով օրենսդրական հնարավոր հակասությունները, չընդունվեց:

Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանն առաջարկեց հաստատել սեփականությունը հանդիսացող լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի) գույքի դուրսգրման, լուծարման և օտարման կարգի նախագիծը՝ համապատասխան խմբագրումներով. կողմ՝ 30, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 16-րդ ենթակետով՝ հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի սեփականությունը հանդիսացող լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի) գույքի դուրսգրման, լուծարման և օտարման կարգը՝ համաձայն հավելվածի:

զ) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2014 թ. գործունեության մասին azdarar.am պաշտոնական կայքում հրապարակվող հաշվետվության կրճատ տարբերակի հաստատում: Խորհրդի անդամներին էր ներկայացված ԵՊՅ 2014 թ. գործունեության մասին azdarar.am պաշտոնական կայքում հրապարակվող հաշվետվության կրճատ տարբերակը՝ կից աուդիտի եզրակացությամբ: ԵՊՅ ռեկտոր Ա. Սիմոնյանը գեկուցեց, որ ԵՊՅ 2014 թ. գործունեության հաշվետվության ընդարձակ տարբերակը ներկայացվել է ԵՊՅ խորհրդի 22.12.2014 թ. նիստում, և հիմա անհրաժեշտ է azdarar.am պաշտոնական կայքում հրապարակել այդ հաշվետվության կրճատ տարբերակը:

ԵՊՅ 2014 թ. գործունեության մասին azdarar.am պաշտոնական կայքում հրապարակվող հաշվետվության կրճատ տարբերակի նախագիծը դրվեց քվեարկության. կողմ՝ 30, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ կետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 22-րդ կետի 2-րդ, 42-րդ կետի 7-րդ ենթակետերով և Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 16-րդ ենթակետով՝ հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2014 թ. գործունեության մասին հաշվետվության՝ azdarar.am պաշտոնական կայքում հրապարակվող կրճատ տարբերակը՝ համաձայն հավելվածի:

Է) Այլ հարցեր: Այլ հարցեր չհնչեցին, և Նախագահ Ս. Սարգսյանը նիստը հայտարարեց փակված:

Խորհրդի նախագահ՝

Ս. Սարգսյան

Քարտուղար՝

Մ. Մալխասյան